

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Մասնագիտական դրականության մեջ առաջժամի մասնական կարծիք գոյություն չունի դարձվածի կամ դարձվածաբանական միավորների տարբերակման, դարձվածաբանության ընդգրկման սահմանների վերաբերյալ: Վերջնական լուծում դեռևս չի տրված այն հարցին, թե ի՞նչ է դարձվածը, դարձվածաբանության մեջ լեզվական ո՞ր միավորներն են ընդգրկվում:

Ռուս լեզվաբանական գրականության մեջ դարձվածաբանության ընդգրկման հարցերում որոշակիորեն արդեն ձևավորվել են տարբեր ուղղություններ¹:

Մի շարք մասնագետներ (Բ. Ա. Լարին, Ս. Ի. Օժեգով, Ա. Դ. Ռեդնև, Ա. Վ. Կունին, Ա. Ի. Մոլոտկով և ուրիշներ) դարձվածաբանությունն են վերագրում միայն բառին համարժեք բարդ կարգի ածականի իմաստաբանական միավորներ, որոնց հատուկ են վերաիմաստավորումը և փոխաբերականությունը: Վերոհիշյալ մասնագետները դարձվածաբանության բնագավառից դուրս են թողնում առածները, ասացվածքները, թեմատոր խոսքերը, համարյա բոլոր բարդ տերմինները և այլն, այսինքն բոլոր այն բառակապակցությունները, որոնք դեռևս չեն վերածվել բառային անբաժան արտահայտությունների, չեն ստացել փոխաբերական-ընդհանրական իմաստ կամ բովանդակություն, չեն դարձել փոխաբերական կապակցություններ:

Դարձվածաբանական միավորների տարբերակման հարցում բոլորովին այլ կարծիքի են Լ. Ա. Բուլախովսկին, Ա. Ա. Ռեֆորմատսկին, Ա. Ի. Եֆիմովը, Ն. Մ. Դալկինա-Ֆեդորովը, Ն. Մ. Շանսկին, Վ. Լ. Արխանգելսկին և ուրիշներ, որոնք բուն դարձվածաբանական կապակցությունների հետ դարձվածաբանության մեջ մտցնում են առածա-ասացվածքային արտահայտությունները, թեմատոր խոսքերը, բարդ կամ բաղադրյալ տերմինները: Այդ կարգի միավորները Ն. Մ. Շանսկին համարում է դարձվածաբանական արտահայտություններ:

Օ. Ս. Ախմանովան² դարձվածաբանությունը ընդունում է լայն և նեղ առումով: Նեղ առումով բուն դարձվածներն ա համարում է իդիոմատիկ արտահայտությունները, որոնց հատուկ են տարածավորվածությունը, փոխաբերականությունը և այլն, իսկ լայն առումով դարձվածների մեջ է մտցնում կայուն բառակապակցությունները, բոլոր տեսակի բաղադրյալ տերմինները և հարադրություններ:

Վերջապես, դարձվածաբանական միավորների տարբերակման չափանիշները, դարձվածաբանության ընդգրկման հարցերի վերաբերյալ եղած կար-

¹ См. Н. С. Валгина, Д. Е. Розенталь, М. И. Фомина, В. В. Цапункевич, Современный русский язык, М., 1966, էջ 42:

² О. С. Ахманова, Очерки по общей и русской лексикологии, М., 1957, էջ 116—190:

ծիքները երբեմն այնքան հակասական են ու իրարամերժ և տարբեր հեղինակների կողմից առաջադրվող դարձվածների ցանկերը իրարից այնքան են տարբերվում, որ անգամ կարելի է ենթադրել, թե նրանք խոսում են լեզվական ոչ թե նույն, այլ տարբեր և նույնիսկ իրար հակադիր իրողությունների մասին:

Դարձվածաբանության սահմանների, դարձվածաբանական միավորների տարբերակման չափանիշների, դարձվածների իմացաբանական և ձևաբանական դասակարգման, նրանց հոմանիշային կապերի և այլ կարևոր հարցերի շուրջ միասնական կարծիք գոյություն չունի նաև հայ լեզվաբանական գրականության մեջ:

Հայոց լեզվի դարձվածաբանական միավորներին վերաբերող որոշ հարցեր քննության առարկա են դարձել Ա. Մուրվալյանի³ աշխատություններում: «Հայոց լեզվի բառային կաղմը» մենագրության մեջ հիմնականում ընդունելով Վ. Վինոգրադովի դասակարգումը, նա փաստորեն ընդարձակում է հայերեն դարձվածների սահմանները, դրանց մեջ ընդգրկելով թե՛ իդիոմատիկ և թե՛ ոչ իդիոմատիկ դարձվածաբանական միավորները, այդ թվում նաև առածների, ասացվածքների մի մասը, թեև լոր խոսքերը, աֆորիզմները, հարադրական կայուն կապակցությունները և այլն: Հետագայում արդեն Ա. Մուրվալյանը հայերեն դարձվածաբանությունը նվիրված իր այլ աշխատության մեջ որոշ վերաուղահումներ անելով առածների, ասացվածքների, թեև լոր խոսքերի և աֆորիզմների վերաբերյալ, ձգտում է որոշ չափով սահմանափակել հայերեն դարձվածների սահմանները, թեև այդ հարցում որոշակի և ստույգ չափանիշներ նա չի նշում: Հիշյալ աշխատության մեջ միաժամանակ վերանայելով դարձվածների դասակարգման իր նախկին սկզբունքները, նա հայերեն դարձվածները դասակարգում է «դարձվածքային հատուկ արտահայտությունների, դարձվածքային արտահայտությունների և դարձվածքային բառակապակցությունների»:

Հայերենի դարձվածաբանությունը ուսումնասիրության հատուկ նյութ է դարձել Կ. Դևորգյանի⁴ թեկնածուական դիսերտացիայի համար: Սույն աշխատության մեջ հիմնականում քննվում են հայերեն իդիոմատիկ արտահայտությունների ծագման, բաղմիմաստության, հոմանշության և համանունության հարցերը: Մյուս կողմից, ի հակադրություն Ա. Մուրվալյանի, դիսերտացիայի հեղինակը, նեղացնելով հայերեն դարձվածների սահմանները, փաստորեն հանդեցնում է դրանք իդիոմատիկ արտահայտությունների:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ դարձվածների սահմանների որոշման անկայունությունը, դարձվածաբանական միավորների ընդգրկման ոչ հստակությունը սլայմանավորված են դարձվածների սահմանման բաղմաղանությամբ և դարձվածաբանական միավորների տարբերակման կայուն չափանիշների բացակայության հանգամանքով:

Դիտվելով լեզվում որպես առկա կայուն կապակցությունների ամբողջություն, դարձվածները սահմանվում են որպես բառային այնպիսի անբաժան, իմաստով ամբողջական բառակապակցություններ, որոնք խոսքի մեջ վերարտադրվում են (կրկնվում են) իբրև խոսքային պատրաստի միավորներ: Դարձ-

³ Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կաղմը, Երևան, 1955: Նույնի՝ Հայոց լեզվի դարձվածաբանություն և բառակաղմություն, Երևան, 1959:

⁴ К. Геворкян, Идиомы армянского языка (автореф. канд. дис.), Ереван, 1967.

վածք սահմանում են նաև որպես փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցություն կամ իդոմատիկ նշանակությամբ կայուն կապակցություն, կամ կայուն նախադասություն (ֆրազ)։ Դարձվածի մեջ տեսնում են նաև փոխաբերություն, պատկերավորություն, հուզա-արտահայտչական գունավորում և այլն⁵։

Դարձվածաբանության շափանիշներ են համարվում նաև դարձվածաբանական միավորների կայունությունը, իմաստի (կամ իմաստների) ամբողջականությունը, տարածվածությունը, նորակազմական կամ կառուցվածքային տարբերակների հնարավորությունը, բառացի անթարգմանելիությունը և այլն։ Բացի դրանից, որպես լեզվի ինքնուրույն իմաստային միավոր, դարձվածք օժտված է բառային իմաստով, հուզա-արտահայտչական գունավորմամբ և քերականական կարգերով։ Դարձվածաբանական միավորը մեկից ավելի բառերի կապակցությունը լինելով՝ հիմնովին տարբերվում է այդ կարգի բառերի ազատ կապակցությունից։ Հիմնական տարբերությունն այն է, որ բառերի ազատ կապակցությունները կազմվում են հաղորդակցման պրոցեսում և, հետևաբար, կայուն չեն կարող լինել, իսկ դարձվածաբանական կապակցությունները հաղորդակցման պրոցեսում չեն կազմվում, այլ վերարտադրվում են որպես պատրաստի իմաստային միավորներ՝ իրենց համարժեք հոմանիշ բառերի դիմաց. օր. երես թեքել, — արհամարհել, անուշադրության մատենելիզ ծռել, — խնդրել (մի բան՝ ստորանալով, նվաստանալով). աչք գցել, — մի բան հավանել, դուր գալ (ձեռք բերելու նպատակով) և այլն։

Այնինչ բոլորովին այլ իմաստ ունեն վերոհիշյալ դարձվածաբանական միավորների բաղադրիչներից կազմված ազատ կապակցությունները. ինչպես նա իր ծանոթին տեսնելով՝ երեսը թեքեց կամ նա իր վիզը ծռեց, նրա վիզը ծռվեց, կամ նա աչքը վայրկենապես գցեց մեկի կամ մի բանի վրա և այլն։ Ի տարբերություն ազատ կապակցությունների, բառերի նման դարձվածաբանական միավորները ևս կայուն են իրենց կազմությամբ։

Այդ նշանակում է, որ այդ դարձվածները կազմված են որոշակի բառերից, որոնց դասավորությունը տվյալ կառուցվածքում սովորաբար կայուն է լինում. օր. աչքս (աչքդ, աչքը) լույս (շնորհավորանքի արտահայտություն), աչքով անել (ակնարկել), աչք գցել կամ աչք դնել (մի բան հավանել), կտուցը մեղր քսել կամ քաղցրացնել (կաշառել), առանց դանակի մորթել, քոռ դանակով մորթել (խիստ տանջել) և այլն։

Այսպիսով, որպես օրենք, դարձվածաբանական միավորների բաղադրիչների տեղը կայուն, հաստատուն է, և դարձվածներն էլ կայուն և ամբողջական միավորներ են, որոնց ներսում հիմնականում հնարավոր չէ հավելագրումներ կատարել։ Վերոհիշյալ հատկանիշները հաշվի առնելով, դարձվածք բնորոշվում է նաև որպես երկու և ավելի շեշտված բառերից կազմված կրկնվող լեզվական միավոր, որն ամբողջական է իր իմաստով և կայուն՝ իր կազմությամբ ու կառուցվածքով⁶։

Դարձվածի իմաստը արտահայտվում է նրանով, որ դարձվածն ունի իր բովանդակությունը, բացատրվում է, իսկ որոշ դարձվածներ էլ բառային հա-

⁵ См. Н. С. Валгина и другие, *Уч. зап.*, т. 40; Н. Шанский, *Фразеология современного русского языка*, М., 1953. «Фразеологический словарь русского языка», М., 1967, т. 15.

⁶ Н. Шанский, *Уч. зап.*, т. 21.

մասպատասխան արժեք ունեն և կարող են փոխարինվել իրենց համարժեք կամ համանշանակ բառով՝ հոմանշով:

Դարձվածաբանության մեջ քերականական կարգերի առկայությունը արտահայտվում է նրանով, որ բառային արժեք ունեցող դարձվածներն ունեն խոսքի մասային կարգ, այսինքն՝ պատկանում են այս կամ այն խոսքի մասին և բառերի նման մտնում են զանազան քերականական և շարահյուսական հարաբերությունների մեջ:

Դարձվածները իրենց ձևով և իմաստով ստորաբաժանվում են երկու կարգի.

Ա. Առանձին խումբ են կազմում այն դարձվածաբանական միավորները, որոնք իրենց իմաստով հավասարարժեք են նախադասությանը, տրամաբանորեն համապատասխանում են դատողությանը և կառուցվածքով փաստորեն նախադասություններ են: Դրանց են վերաբերում իդիոմատիկ և առածա-ասացվածքային արտահայտությունները. ինչպես՝ ազոավին (կամ ազոավը) սիրամարգի փետուրներով զարդարել, — մարմնապես և հոգեպես տգեղին, այլանդակին արտաքինապես փոխել, արտաքին փայլով տգեղությունը՝ այլանդակությունը ծածկել, սբողել), կաթը շրթունքներին դեռ չի շորացել, — (դեռևս անփորձ է, երեխա է), գայլի գլխին ավետարան կարդացին, ասաց թողեք..., — (մեկին անօգուտ խրատել), ի՞նչ ապուր ուտեմ, — (ի՞նչ անեմ, ի՞նչ միջոցի դիմեմ), աչ ե՞ս, թե ձախ կամ տղա ե՞ս, թե աղջիկ, — (հաջող ե՞ս, թե անհաջող, նպատակիդ հասա՞ր, թե ոչ), քթից բռնես, հոգին կտա, — (բոլորովին թույլ, անզոր է, դիմացկուն չէ), մի թեև քաշես, հազար կարկատան կթափվի, — (հազի շորերը շատ հին՝ մաշված են) և այլն:

Բ. Դարձվածների մյուս խումբն են կազմում դարձվածաբանական այն միավորները, որոնք իմաստով հավասարարժեք են բառին (կամ բառակապակցությանը), այսինքն՝ տրամաբանորեն համապատասխանում են հասկացությունը. ինչպես, օրինակ՝ (մեկին) դրախտն ուղարկել, դժոխքի բաժին դարձնել, դժոխքն ուղարկել, ալլահի գոգն ուղարկել, սատանի բաժին անել կամ դարձնել, այն աշխարհն ուղարկել, շան սատակ անել կամ (մեկի) աստղը խալվարեցնել, արևը առնել, արևը հանգցնել, արևը մարել, արևը մթնացնել, արևը սևացնել, արևը քաղել, ճրար՞ հանգցնել, ճրագը մարել, հոգին առնել, գլուխը սխտորել, — սպանել և այլն:

Այս կարգի դարձվածներն օժտված են այն բոլոր հիմնական հատկանիշներով, ինչ որ բառը, այսինքն՝ ունեն բառային իմաստ, ըստ որում կարող են ունենալ միայն մեկ և մեկից ավելի իմաստներ, լինել մենիմաստ, բազմիմաստ և այլն: Ինչպես և բառերը, այս կարգի դարձվածները կարող են ունենալ հիմնականում երեք տիպի իմաստներ՝ ազատ, դարձվածաբանորեն առնչված և շարահյուսորեն պայմանավորված: Հիշյալ դարձվածները նախադասության մեջ հանդես են գալիս որպես նրա այս կամ այն անդամը, այսինքն նախադասության մեջ կատարում են շարահյուսական ֆունկցիա:

Դարձվածները, այսպիսով, կազմված են երկու և ավելի բաղադրիչներից (բառերից), ըստ որում դարձվածը կազմող այդ բառերը կարող են պատկանել խոսքի բոլոր մասերին: Հատկանշական է, որ տվյալ դարձվածի բաղադրիչների բանականային կալմը կարող է տարբեր լինել. որոշ դեպքերում դարձվածը կազմող որոշ բաղադրիչներ կամ բառեր կարող են դուրս բնկնել, չփոխելով դարձվածի ընդհանուր իմաստը, այսինքն՝ դարձվածը կարող է կրճատվել ա-

ռանց դարձվածի իմաստին որևէ վնաս հասցնելու. օր. գլխին դաշլի ավետարան կարդալ և դաշլի ավետարան կարդալ կամ՝ գլխին լափ թափել և գլխին շան լափ թափել, մեկի կակուղ դամարը բռնել և մեկի դամարը բռնել և այլն: Մյուս կողմից, դարձվածի բաղադրիչները դարձվածի գործածության ժամանակ որոշ դեպքերում կարող են դուրս մնալ, առանց դարձվածի իմաստը փոխելու. օր. բեղերի տակ (ժպտալ, խոսել),— անձայն՝ կամացուկ, ինքն իրեն (ժպտալ, խոսել), գլուխը կոտրելով կամ ջարդելով (սլանալ, վազել և այլն),— շատ արագ, շտապ և այլն:

Ինչպես և բառերը, դարձվածները նույնպես օժտված են հուզա-արտահայտչական գունավորմամբ և ոճական առանձնահատկություններով և կիրառական տարբեր ֆունկցիաներով: Հատկանշական է այն, որ արդի հայերենում դարձվածների ճնշող մեծամասնությունը բարբառային ծագում ունի և իր մեծ մասով էլ պատկանում է լեզվի ժողովրդա-խոսակցական շերտին:

Հայերենում որոշ թիվ են կազմում նաև զուտ գրական և գրքային դարձվածները, որոնք ժամանակակից հայերենին անցել են գրաբարից (ինչպես՝ ծայն բարբառո հանապատի, դո՛ւ կաս միայն Երուսաղեմ, ակն ընդ ալան, ատամն ընդ ատաման) և կամ էլ հանդիսանում են օտարազգի դարձվածաբանական միավորների հայկական պատճենումները. օր. աքիլլեսյան գարշապար, բաբելոնյան աշտարակաշինություն կամ բաբելոնյան խառնակություն, դանայան ընծա կամ պարզե, կոկորդիլոսյան արտասուք (կամ արտասուքներ), կուլիսների ետևում և այլն:

Ըստ պատմա-ժամանակային բնութագրման, հայերեն դարձվածաբանական միավորները սովորաբար բաժանվում են ակտիվ և պասսիվ դարձվածների, այսինքն՝ արդի լեզվում հաճախ գործածական և սակավ գործածական, հնացած, հազվադեպ գործածվող և այլն:

Ընդլայնելով դարձվածաբանության սահմանները, այնուամենայնիվ, մենք որոշակիորեն սահմանադատում ենք դարձվածաբանական բուն միավորները՝ այսինքն բուն դարձվածները դարձվածաբանական մնացած միավորներից՝ սովորական հարադրություններից, բաղադրյալ տերմիններից և այլն:

Ա. Բուն դարձվածների մեջ պետք է դասել, ըստ երևույթին, դարձվածների ժամանակակից իմաստաբանական դասակարգմամբ ընդունված կարգերից հիմնականում իդիոմատիկ դարձվածաբանական արտահայտությունները, որոնք մեծ մասամբ բառային արժեք ունեն և հոմանշային հարաբերության մեջ կարող են մտնել ինչպես իրար նկատմամբ, այնպես էլ իրենց համարժեք բառերի հետ, կազմելով համապատասխան հոմանշային շարքեր:

Բ. Բուն դարձվածներից կամ իդիոմատիկ դարձվածաբանական միավորներից պետք է առանձնացնել դարձվածաբանական կապակցությունների որոշ մասը, դարձվածաբանական բոլոր արտահայտությունները, առածները, ասացվածքները, թեավոր խոսքերը և սովորական հարադրությունները, որպես լեզվի պատրաստի միավորներ, որոնք պատկերավորության բնույթ չունեն կամ փոխաբերություն չեն արտահայտում: Դրանք մասնագիտական դրականության մեջ անվանվում են ոչ իդիոմատիկ դարձվածաբանական միավորներ: Դրանք խայտաբղետ են իրենց իմաստային բովանդակությամբ և կառուցվածքային առանձնահատկություններով:

Հիշյալ միավորների միջև հոմանշային հարաբերությունները կարող են տարբեր ձևով արտահայտվել: Առանձնակի հոմանշային հարաբերություններ կարող են հաստատվել իրենց կազմությամբ նախադասություն հանդիսացող միավորների միջև՝ մի կողմից և բառային արժեք ունեցող մնացած բառակապակցությունների և դրանց հոմանշանակ կամ համարժեք բառերի միջև՝ մյուս կողմից: Միաժամանակ այս վերջինները հոմանշային հարաբերության մեջ կարող են մտնել բուն դարձվածների՝ իդիոմատիկ դարձվածաբանական միավորների և համարժեք բառերի հետ, կազմելով հոմանշային շարքեր:

Դարձվածաբանական հոմանիշների շափանիշները նույնն են, ինչ որ բառային հոմանիշներինը: Ինչպես բառային հոմանիշները, դարձվածաբանական հոմանիշները նույնպես համաժամանակյա (սինխրոնիկ) լեզվական կարգ են ներկայացնում. այդ նշանակում է, որ հոմանիշներ կարող են համարվել հայոց լեզվի զարգացման արդի շրջանի դարձվածաբանական միավորները միայն, արդի հայերենի համակարգի մեջ մտնող դարձվածները:

Հայերեն դարձվածները, գլխավորապես իրենց շարահյուսական-քերականական կառուցվածքով, ինչպես և ծագումով, ավելի նոր են և վերաբերում են ժամանակակից հայոց լեզվի առավելապես ժողովրդա-խոսակցական և մասամբ նաև գրքային ոճերին: Հայերեն դարձվածաբանական միավորները մտնում են ժամանակակից հայերեն համակարգի մեջ, լեզվի բառային և համապատասխան միավորների հետ կազմելով մի ամբողջություն: Դարձվածաբանական միավորները, մյուս կողմից, արդի հայերենում պատմականորեն կազմավորված հոմանշային հարաբերությունների հիման վրա, իմաստների նույնության կամ մոտության սկզբունքներով, իրար նկատմամբ կամ համարժեք բառերի հետ կազմում են համապատասխան հոմանշային շարքեր:

Հայոց լեզվի դարձվածաբանական միավորների մեր ընդունած դասակարգման համապատասխան էլ պետք է քննենք իդիոմատիկ և ոչ իդիոմատիկ հոմանշային դարձվածները, առանձնացնելով դրանց մեջ երեք կարգի միավորներ. ա) իրենց կառուցվածքով նախադասություն հանդիսացող դարձվածները, բ) բառային արժեք ունեցող դարձվածները և գ) ոչ իդիոմատիկ դարձվածաբանական միավորները, սովորական կայուն կապակցությունները, բաղադրյալ տերմինները և այլն:

Բառային հոմանիշների նման, դարձվածային հոմանիշներ են համարվում այն դարձվածաբանական միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց կարող են տարբերվել ռեալական տարբեր կիրառություններով և հուզա-արտահայտչական այլևայլ գունավորումներով: Իմաստների նույնության ղեկավարում դրանք կարող են տարբերվել իրարից կամ ռեալական տարբեր կիրառություններով և ֆունկցիայով, կամ հուզա-արտահայտչական զանազան դունավորումներով և երանգավորման աստիճաններով, ինչպես նաև լեզվի տարբեր շերտերին և գործածության տարբեր ոլորտներին իրենց պատկանելիությամբ: Հոմանիշ դարձվածների առարկայական իմաստների տարբերությունները չեն կարող անցնել նրբերանգների սահմաններից և, որ ամենակարևորն է, այս դեպքում էլ, այդ կարգի դարձվածները նույնպես օժտված լինելով ոճական որոշակի կիրառություններով և հուզա-արտահայտչական տարբեր գունավորմամբ, իրարից կարող են տարբերվել կամ զանազանվել վերահիշյալ հատկանիշներով, ինչ որ նախորդ կարգի նույնիմաստ հոմանշային դարձվածները:

Ինչպես և բառային հոմանիշների դեպքում, բոլորի կողմից ընդունված միասնական սահմանում առաջիկ դոյություն չունի նաև դարձվածաբանական հոմանիշների համար:

Յու. Դ. Ապրեսյանը⁷ հոմանիշներ է համարում այնպիսի դարձվածաբանական միավորները, որոնք իրենց առանցքային իմաստի համընկնման հետ տարբերվում են իմաստների նրբերանգներով և լեզվաբանական կապի՝ հոմանշության հիման վրա ընդունակ են իրար փոխարինելու խիստ որոշակի կոնտեքստներում, որտեղ նրանք գործածվում են միևնույն շարահյուսական կառուցվածքներում և կապակցվում են միևնույն բառային շրջապատի հետ:

Դարձվածաբանական հոմանիշների այս սահմանման հետ, դարձվածների հոմանշության համար առաջ են քաշվում հիմնականում նրանց իմաստների նրբերանգային տարբերությունները, իսկ մյուս կողմից որոշակի կոնտեքստներում նրանց փոխադարձ փոխարինելիությունը: Դարձվածների հոմանշության հիմնական չափանիշը կամ ելակետը նրանց իմաստների նրբերանգային տարբերությունները ընդունելով, մեր կարծիքով, բացառվում է նաև նրանց փոխադարձ փոխարինելիությունը ամեն մի կոնտեքստում, որովհետև իմաստային յուրաքանչյուր տարբերություն, թեկուզ և նրբերանգային, արդեն իրավունք չի տալիս խոսելու փոխարինելիության մասին ընդհանրապես: Սկզբունքով սրան հակադրվում է «Ռուսաց լեզվի դարձվածաբանական բառարանում» Ա. Ի. Մոլոտկովի⁸ սահմանումը: Ըստ այդ վերջին սահմանման, հոմանիշ դարձվածներ են համարվում այնպիսիները, որոնք՝ ա) նույնն են իրենց բառային իմաստներով, բ) չունեն իրենց կազմում միատեսակ բաղադրիչներ, գ) նույնն են իրենց բառա-քերականական բնութագրմամբ և դ) թույլ չեն տալիս բաղադրիչների փոխադարձ փոխարինելիությունը:

Դժվար չէ նկատել, որ այս դեպքում էլ, երբ հոմանշության չափանիշ է ընդունվում միայն դարձվածների իմաստային նույնությունը, միակողմանիորեն նեղացվում են հոմանշության սահմանները և դրանով իսկ սահմանափակվում է դարձվածային հոմանիշների քանակը, անտեսելով լեզվում առկա դարձվածաբանական միավորների համեմատաբար մեծ զանգվածը, որտեղ հոմանշային հարաբերությունները արտահայտված են իմաստների այս կամ այն չնչին՝ նրբերանգային տարբերություններով:

Այսպիսով, դարձվածաբանական միավորների հոմանշության չափանիշների հիմքում նույնպես, ինչպես և բառային հոմանիշների դեպքում, պետք է դնել անպայման նրանց իմաստների նույնության և մոտության սկզբունքը: Այսինքն՝ հոմանիշ պետք է համարել դարձվածաբանական այն միավորները, որոնք մոտ կամ նույն իմաստներ ունեն և խիստ որոշակի կոնտեքստներում կարող են փոխարինվել իրարով կամ իրենց համարժեք բառերով: Իրականում հոմանիշ դարձվածների փոխադարձ փոխարինելիությունը կարող է հնարավոր դառնալ միայն նրանց իմաստների նույնության դեպքում, ըստ որում, այդ դեպքում էլ պետք է հաշվի առնվեն նույն իմաստն ունեցող դարձվածաբանական միավորների ոճական կիրառությունները և շարահյուսական կառուցվածքներում նրանց կատարած դերը կամ ֆունկցիան: Այստեղ հիմ-

⁷ Ю. Д. Апресян, Фразеологические синонимы типа «глагол+существительное» в современном английском языке, М., 1967, էջ 2:

⁸ «Фразеологический словарь русского языка», էջ 17:

նական խոսքը պատկանում է կոնտեքստին կամ բառային այն շրջապատին, որի մեջ հանդես է գալիս դարձվածաբանական այս կամ այն միավորը: Այսպես՝ ծալքը պակաս, ծուծը բարակ, ծուծը պակաս, — պակասամիտ, թեթևուլիկ, խենթ, կամ՝ կապից փախած, կապը կտրած, թոկից փախած, քարը քսած, — լիրբ, անամոթ, անպատկառ, կամ՝ երեսի ջուրը դնացած, երեսի քողը պատռած, բերան պատռած, պատրած բերան, հազար մաղով անցկացած, հազար մաղով հաց կերած, — լկտի, անսարկեշտ, անհամեստ և այլն: Բերված հոմանիշ դարձվածների առանձին շարքերի մեջ մտնող դարձվածները թեև միևնույն իմաստն ունեն, բայց ոչ միշտ և ոչ էլ ցանկացած կոնտեքստերում կարելի է դրանք իրարով փոխարինել:

Բառային հոմանիշների նման դարձվածաբանական հոմանիշները նույնպես իրենց գոյությունը հաստատում են հոմանիշների շարքերի մեջ, որոնք կազմվում են երկուսից ավելի հոմանիշ դարձվածներից, ըստ որում, հոմանշային հարաբերության մեջ են մտնում, հետևաբար և, հոմանիշների շարքեր են կազմում մեծ մասամբ կառուցվածքային ընդհանրություն ունեցող դարձվածաբանական միավորները: Հատկանշական է այն իրողությունը, որ որպես նախադասություն հանդես եկող կամ տրամաբանորեն դատողություն արտահայտող դարձվածաբանական միավորները հոմանշային հարաբերության մեջ են մտնում իրար նկատմամբ և կազմում են հոմանշային առանձին, անկախ շարքեր: Այնինչ, հարադրական կառուցվածք ունեցող և տրամաբանորեն հասկացություն արտահայտող դարձվածաբանական միավորները, որոնք բառային արժեք ունեն և մեծ մասամբ հոմանիշ են նաև իրենց համարժեք բառերին, կազմում են հոմանիշների ինքնուրույն շարքեր: Այս վերջին դեպքում այս կարգի դարձվածների հոմանիշները իրենց համարժեք բառերի հետ միավորվում են ընդհանուր բառադարձային հոմանիշների շարքերի մեջ: Խիստ սակավ դեպքում, երբ հիշյալ դարձվածները շունեն համապատասխան բառային հոմանիշներ, այս կարգի դարձվածաբանական միավորները միայն առանձին, ինքնուրույն շարքեր են կազմում:

Դարձվածաբանական միավորները բառերը նման լինելով մենիմաստ կամ բազմիմաստ, ըստ այդմ էլ հոմանշային հարաբերության մեջ են մտնում իրար հետ: Ըստ որում, բազմիմաստ դարձվածաբանական միավորը կարող է հոմանշային կապեր հաստատել մեկ կամ մի քանի իմաստներով: Ի վերջո, անհրաժեշտ է նշել, որ հոմանիշ դարձվածների բաղադրիչները իրար նկատմամբ որոշ հարաբերության մեջ են մտնում, որը կախված է դարձվածների կառուցվածքային տիպերից և առանձնահատկություններից:

Որպես նախադասություն հանդես եկող հոմանիշ դարձվածաբանական միավորներ. այս կարգի մեջ են մտնում հայերենի դարձվածային արժեք ունեցող առածները, ասացվածքները, թեւավոր խոսքերը, դիպուկ արտահայտությունները, աֆորիզմները, անեծքները, օրհնանքները, մաղթանքները և այլն. օր. աստված հեռու տանի, աստված հեռու պահի, աստված հեռու անի, աստված ետ ու հեռու անի, աստված շանի, աստված ոչ անի, աստված աղատի, աստված մի արասցե, տեր մի արասցե, քալ լիցի, — (մաղթանք՝ վերահաս որևէ շար բանից խուսափելու համար). կամ՝ արևդ ապրի, արևդ երկար լինի, կյանքդ երկարի կամ երկար լինի, կյանքդ երկար լինի ջրի պես, — (մեկին արևշատության ցանկություն, շատ ապրել ցանկանալու մաղթանք). կամ՝ մի ծաղկով դարուն չի դա, մի ծիծեռնակը դարուն չի բերի, մի ձեռքը ծափ չի

տա,—(մեկի՝ անհատի ջանքերով կամ մի եզակի օրինակով որևէ դործ չի իրականանա՝ հաջողությամբ չի պսակվի), կամ՝ կրակը գնացել՝ (է) մնացել է մոխիրը և հայհայր գնացել՝ (է) վայվայն է մնացել,— (ծերացել է, առույգությունը, կենսախնդրությունը կորցրել է). կամ՝ բարե տաս՝ բարեկենդանին կգա և երես տաս՝ աստառ կուզի,—(աներեսի մեկն է). կամ՝ պատը ծակ է, պատի վրա ճանճ կա, մազը ծակ է,— (նախազգուշական արտահայտություն, որ խոսակցությունը կարող է ուրիշն իմանալ) և այլն:

Վերոհիշյալից բացի հանդիպում ենք բառային արժեք ունեցող դարձվածների հետ որպես նախադասություն հանդես եկող դարձվածաբանական միավորների հոմանշային կապերի, ինչպես, օր. դու կաս միայն երուսաղեմ և ուղտի ականջում ֆնած,—(միամիտ, անտեղյակ մարդու մասին) և այլն:

Դարձվածաբանական հոմանիշների մեջ իրենց ծավալով և կառուցվածքային առանձնահատկությամբ առանձին խումբ են կազմում բառային արժեք ունեցող կամ, ինչպես ընդունված է ասել, տրամաբանորեն հասկացություն արտահայտող դարձվածաբանական միավորները: Դրանք ծավալով ամենաընդարձակը և տեսակներով ամենաբազմազանն են լեզվում: Ունենալով բառային արժեք, դրանք փաստորեն օժտված են բառա-իմաստային, բերականական և ոճական այն բոլոր առանձնահատկություններով, որոնք հատուկ են բառային միավորներին՝ բառերին: Այս կարգի դարձվածաբանական միավորների հոմանշային հարաբերությունների հիմնական առանձնահատկությունը այն է, որ դրանք հոմանիշների շարքեր կարող են կազմել ինչպես իրար, այնպես էլ իրենց համարժեք բառերի հետ: Վերոհիշյալ կարգի դարձվածաբանական հոմանիշները հիմնականում կարելի է բաժանել. ա) անվանական դարձվածային հոմանիշների և բ) բայական դարձվածային հոմանիշների: Հայերենում գերակշռում են բայական, ածականական և մակբայական հոմանիշները:

Ա. Անվանական դարձվածային հոմանիշներ.— Այս խմբի մեջ հիմնականում մտնում են գոյականական, ածականական, մակբայական դարձվածաբանական միավորները, այսինքն՝ այնպիսի դարձվածներ, որոնց բառային իմաստը պայմանավորում է լեզվի խոսքի մասային այս կամ այն պատկանելիությունը:

1) Գոյականական դարձվածային հոմանիշներ.— օր. բաբելոնյան խառնակություն, բաբելոնյան աշտարակաշինություն,— խառնակություն, խռովություն, իրարանցում, շփոթ, շփոթություն. արկադյան սոխակ, երկար ականջավոր, երկար ականջով,— էջ. թուր ու մուր,— ամոթանք, երեսի ջուր,— ամոթ, արբահամյան զավակ, Աբրահամի զավակ,— հրեա, ասե-կոսե,— բամբասանք և այլն:

Գոյականական դարձվածաբանական միավորները հայերենում հիմնականում ունեն հետևյալ կառուցվածքը.

Ածական + գոյական. օր. բաբելոնյան խառնակություն, աջ թև, աջ ձեռք, արկադյան սոխակ և այլն:

Ածական + ածական. օր. երկար ականջավոր:

Ածական + գոյական (գործիական հոլով), օր. երկար ականջով:

Գոյական (սեռական հոլով) + գոյական (ուղղական հոլով), օր. կյանքի ընկեր:

Գոյական (ուղղական հոլով) + գոյական (ուղղական հոլով). օր. թուր ու մուր, — խայտառակություն:

2) Ածականական դարձվածային հոմանիշներ. — Հայոց լեզվում համեմատաբար ավելի մեծ խումբ են կազմում ածականական դարձվածները, բնականաբար և այդ կարգի հոմանիշները. օր. ձեռքը դատարկ, ձեռքը պակաս, ձեռքը կարճ, տակը դատարկ, ավուր հացի կարոտ, մորից (կամ մորե) մերկ, — աղքատ, չքավոր, շունկոր, կամ՝ աչքը փակ, աչքը գոց, կապած ավել, — անճար. կամ՝ ծալ(ք)ը պակաս, տախտակը պակաս, վերնատունը դատարկ, վերին հարկը դատարկ, տանձի կոթ, (արեմտհ.), (հեգն.) խելքի բուն, խելքի պուտուկ, խելքի տոպրակ, խելքի կարոտ, խելքից բարակ, խելքից բոբիկ, խելքից պակաս, խելքից ծարավ, կատարը դատարկ, կուտը պակաս, փայտի գլուխ, — հիմար, ապուշ, անխելք և այլն, կամ՝ դարմանի տակի ջուր, մարմանդ դետ, խուփ ու ծուփ, աչքով քար ճաքեցնող, փորի օձի հետ կովող, հոգին սատանային ծախած, սատանայի հետ սոխ ու սխտոր ուտող, սատանայից սխտորի հոտ առնող, սատանայից յւթ օր առաջ (կամ շուտ) ծնված, սատանայի ծնունդ, սատանային բնից հանող, գլխարկի տակ դեեր պահող, օձից շապիկ հանող (քսուխոսքով), սանամորը խաբող, ծուռ ճամփով գնացող, միտքը ծուռ, միտքը կեղտոտ, ներսը սատանա՝ դուրսը քահանա, ներսեն սատանա՝ դրսեն սուրբ, սուրբ սխտոր, — նենգ, խարդախ, խաբեբա և այլն: Համեմատաբար շատ են այն դարձվածները, որոնք հոմանշային հարաբերության մեջ են մտնում անմիջապես իրենց համարժեք կամ համադոր, այսինքն՝ նույն կամ մոտ իմաստն ունեցող բառերի հետ. օր. իր ասածի, կող(ք)ը հաստ, — համառ, կամակոր, քմահաճ. կամ խելքի մոտ (կամ մոտիկ), — հավանական, հնարավոր. բերանը պատռած, — սանձարձակ. ձեռքը բաց, — առատածեն. ձեռքը գոց, ձեռքը հուպ, ձեռքը ձիգ, — ժլատ. ճիտը ծուռ, — խեղճ. ոտը դուրս, — անբարոյական. պորտը դուրս նետած, պորտը կտրած, պորտը շունը տարած, — թափառասեր և այլն:

Բառային արժեք ունեցող ածականական դարձվածների առանձնահատկությունն այն է, որ նրանք ունեն բաղմապիսի կառուցվածք: Հիմնականում դրանք շրջասություններ են, նկարագրական կապակցություններ և հարակատար ու ենթակայական դերբայներով կազմված դարձվածներ: Հանդիպում են անգամ ածականի արժեք ունեցող ամբողջական դարձված-նախադասություններ: Բաղադրիչների քանակի տեսակետից ածականական դարձվածները լինում են երկանդամ և բաղմանդամ:

3) Մակբայական դարձվածային հոմանիշներ. — Այս կարգի դարձվածները նույնպես հոմանշային հարաբերության մեջ են մտնում իրար նկատմամբ, ինչպես նաև իրենց համարժեք բառերի հետ կազմում են հոմանշային շարքեր. օր. աչքի չափով, — մոտավորապես, աչքիս վրա, — սիրով, հոժարաբար. մի բերան, մի գլուխ, — շարունակ, անընդհատ. ձեռքի տակից, ձեռքի տակով, — ծածուկ, գաղտնի. ոտքով-գլխով, — ամբողջապես. գլուխ կոտրելով կամ ջարդելով (վաղել, սլանալ և այլն), — շտապ, շատ արագ և այլն: Այս կարգի դարձվածների առանձնահատկությունն այն է, որ լեզվում համեմատաբար փոքրաքանակ լինելով՝ իրար նկատմամբ հաղվագյուտ դեպքերում են հոմանշային հարաբերությունների մեջ մտնում: Նրանք հոմանշային հարաբերության մեջ են գտնվում իրենց համարժեք բառերի հետ, որոնցով էլ կազմում են հոմանիշների առանձին շարքեր: Ըստ կառուցվածքի, մակբայական

դարձվածները նույնպես բաղմապիսի են: Դրանք լինում են մեծ մասամբ երկ-
անդամ, մասամբ նաև բաղմանդամ:

Բ. Բայական դարձվածային հոմանիշներ. — Հայերենի բայական դարձ-
վածները իրենց կազմության տեսակետից, որպես հարադրավոր բայեր, ման-
րամասն և բաղմակողմանի ուսումնասիրության են արժանացել (Մ. Աբեղյան,
Գ. Սևակ, Ա. Աբրահամյան, Ա. Մուրվալյան, Ա. Մարգարյան): Դժբախտա-
բար մասնագիտական գրականության մեջ բայական հարադրությունները և
մասնավորապես դարձվածները մանրամասն քննության չեն ենթարկվել իրար
կամ էլ իրենց համարժեք բառերի նկատմամբ ունեցած հոմանշային հարա-
բերության տեսակետից:

Դարձվածաբանական մյուս միավորների համեմատությամբ բայական
դարձվածները ժամանակակից հայերենում ամենասովոր քանակն են կազ-
մում: Բայական դարձվածները և դրանցով կազմված հոմանիշների շարքերը
սովելի հարուստ են և բաղմազան, բան անվանական դարձվածային հոմանիշ-
ները, ինչպես՝ խնդրել, աղաչել, աղերսել, — բերան ծռել, գլուխ ծռել, վիզ
ծռել, շլինք ծռել, գոտկից կախ ընկնել, դեմ ընկնել, երես դնել, երես գցել,
երես մրել, երես ծռել, երես սևացնել, երեսը գոմշի կաշի շինել, երեսը պըն-
դել, երեսը դեմ անել, երեսը դեմ տալ, երեսը թափել, երեսը բոշի երես շինել,
լեզու ածել, լեզու թափել, լեզու հանել, ձեռք ու ոտք ընկնել, ոտքը լիզել, ոտքը
պագնել, ոտներն ընկնել, պորտը գետինը քսել, պռունկը պատռել, փեշից կախ
ընկնել, օձի լեզու հանել և այլն:

Այս կարգի հարուստ հոմանշային կապերից բացի հայերենի բայական
դարձվածների մի մասն էլ հոմանշային հարաբերության մեջ է գտնվում իրեն
համարժեք բառերի հետ: Դրանք օժտված չեն հոմանշության այն հարուստ կա-
պերով և ճյուղավորումներով, ինչ որ ունեն նախորդ կարգի բայական դարձ-
վածները. օր. կանաչ-կարմիրը կապել, — ամուսնացնել (տղային), կատիկին
հույս տալ՝ շոքել՝ ջուր դնել, — մեկին ստիպել, հարկադրել. կրակի վրա յուղ՝
ծեթ՝ կրակ ածել (ավելացնել, լցնել), — գրգռել, հրահրել մի բանի և այլն:

Այդ դարձվածները մեծ մասամբ մենիմաստ են, բայց կան նաև բաղմի-
մաստ բայական դարձվածներ, որոնք իրենց առանձին իմաստներով հոմա-
նշային հարաբերության մեջ են մտնում առանձին բառերի կամ դարձվածների
միակ կամ առանձին իմաստների հետ. օր. երկու ոտքը մի աման (մաշիկ, կո-
շիկ, սուլի մեջ, չմուշկում) դնել, — 1. ստիպել, պահանջել, շտապեցնել (մի բան
ձեռք բերելու, գնելու). 2. համառել (ասածը պնդել), 3. շատ նեղ վիճակի մեջ
գցել և այլն:

Այսպիսով, իդիոմատիկ բայական դարձվածների հիմնական առանձնա-
հատկությունն այն է, որ փոքր թիվ են կազմում իմաստային նույնության վրա
նրանցով կազմված հոմանշային կապերը, գերապատվությունը տալով, հետե-
վաբար, իմաստների նրբերանգային տարբերությունների հիման վրա կառուց-
ված հոմանշային հարաբերություններին. իսկ ինչ վերաբերում է այդ տիպի
դարձվածային հոմանիշների ոճական կիրառություններին, ապա այդ տեսա-
կետից դրանք ամենահարուստն ու բաղմազանն են:

Իդիոմատիկ դարձվածաբանական միավորների հոմանշային կապերի մա-
սին խոսելուց հետո անհրաժեշտ է անդրադառնալ նաև ոչ իդիոմատիկ դարձ-
վածաբանական միավորների և ընդհանրապես հարադրավոր բայերի, բառային
արժեք ունեցող կայուն կապակցությունների հոմանշային կապերին:

Ոչ իդիոմատիկ դարձվածները և ընդհանրապես բառային արժեք ունեցող կայուն բառակապակցությունները նույնպես հոմանշային հարաբերության մեջ են մտնում ինչպես իրար նկատմամբ, այնպես էլ իրենց համարժեք բառերի հետ:

Ի տարբերություն իդիոմատիկ բայական դարձվածների, սովորական հարադրավոր բայերը և ընդհանրապես ոչ իդիոմատիկ բայական դարձվածները արտահայտության ոչ պատկերավոր միջոցներ են, հետևաբար և վերջիններիս մոտ կամ իսպառ բացակայում, կամ էլ ավելի նվազ չափով են արտահայտվում ոճական և այլ կարգի տարբերությունները: Դրա հետ մեկտեղ հիշյալ կապակցություններում ավելի հստակորեն է արտահայտվում իմաստների մերձավորությունը, նույնիսկ կարելի է ասել՝ իմաստների նույնությունը, այսինքն՝ դրանց մեջ հաստատվում են նույնանիշային հարաբերություններ: Դրանցում անհամեմատ խիստ սահմանափակ են և անգամ համարյա բացակայում են իմաստային որոշակի տարբերությունների վրա հիմնված հոմանշային կապերը. օր. վար անել — վարել, մարդ դառնալ, — մարդանալ, խոսք տալ, — խոստանալ, մոտ բերել, — մոտեցնել, մոտ գալ, — մոտենալ, կամ՝ սուտ ասել, սուտ խոսել, սուտ խաբել, — խաբել. ճանապարհ դնել, ճանապարհ գցել, ճամփա դնել, — ճանապարհել, կամ՝ աղաչանք անել, պաղատանք անել, — աղաչել, պաղատել և այլն:

Հետաքրքրականը սակայն այն է, որ այս կարգի հարադրությունների հոմանշությունը պայմանավորված է անմիջականորեն բաղադրիչների իմաստային և ոճական առանձնահատկություններով: Այդ երևույթը առանձնապես ցցուն կերպով է դրսևորվում հարադրավոր բայերի մեջ: Եվ քանի որ հարադրավոր բայերի հիմնական իմաստը անվանական բաղադրիչն է՝ արտահայտում, հետևաբար և այդ բայերի հոմանշությունը պայմանավորված է անվանական բաղադրիչների իմաստների կամ իրենց՝ բաղադրիչների ընդհանրությամբ. օր. ճանապարհ գցել և ճանապարհ դնել, — ճանապարհել. ապուշ կտրել և ապուշ դառնալ, — ապուշանալ և այլն: Հետաքրքրական է, որ այս դեպքում բայերի բաղադրիչները մտնում են ավելի լայն իմաստաբանական հարաբերությունների մեջ, քան անվանական բաղադրիչները, որովհետև, ինչպես նկատում է Ն. Լ. Կամենեցկայտեն⁹, կազմելով ոչ իդիոմատիկ բայական կապակցություններ, բայերը վերախմբավորվում, ձևեր են բերում դարձվածաբանական կապակցված իմաստներ, որոնք բաժանվում են նրբերանդների, կապված տվյալ դարձվածաբանական միավորների հետ: Ավելի ճիշտ՝ հիշյալ տիպի կապակցություններում բայական բաղադրիչները գործողության վերացական գաղափար են արտահայտում, որը և հիմք է ծառայում իմաստային հեռավոր առնչություն ունեցող բայական բաղադրիչներին անգամ իրար մոտենալու. օր. ճանապարհ դնել և ճանապարհ գցել կամ կրակ դառնալ և կրակ կտրել, երգում ուտել և երգում տալ և այլն: Այս դեպքում չի բացառվում նաև բայական բաղադրիչների նույնությունը, ինչպես որ անվանական բաղադրիչների դեպքում. օր. հանձն առնել, վիդն առնել, — պարտավորվել. բղիկ-բղիկ անել, ծվիկ-ծվիկ անել, կտոր-կտոր անել, — բղկտել. աղաչանք անել, պաղատանք անել, — աղաչել, պաղատել և այլն: Հիշյալ կապակցությունների հոմանշությունը հիմնականում կապ-

⁹ См. Н. Л. Каменецкайте, Характер синонимии устойчивых глагольных словосочетаний, «Вопросы языкознания», 1964, № 4, с. 91—98.

ված է անվանական բաղադրիչների հարաբերությունից: Այստեղ դեր է խաղացել, անկասկած, անվանական բաղադրիչների իմաստային կամ ֆունկցիոնալ մոտիկությունը:

Այսպիսով, ոչ իդիոմատիկ բայական կապակցությունների, այսինքն՝ հարադրավոր բայերի հոմանշային հարաբերությունները հիմնականում սահմանափակվում են՝ ա. հարադրավոր բայի և նրան համարժեք բայի միջև և բ. հարադրավոր բայերը իրար նկատմամբ: Այս վերջին դեպքում հարադրավոր բայերի հոմանշային կապերը դրսևորվում են հետևյալ եղանակներով. 1. բոլորովին տարբեր բաղադրիչներով կազմված հարադրավոր բայեր. 2. անվանական բաղադրիչների իմաստային և ֆունկցիոնալ մոտիկության հիման վրա ստեղծվող հոմանշային հարաբերություններ. 3. հարադրավոր բայերի բայական բաղադրիչների նույնության կամ մոտիկության հիման վրա կազմվող հոմանշային կապեր:

Դարձվածաբանական միավորների հոմանշությանը սերտորեն առնչվում է դարձվածքների տարբերակների հարցը:

Նախ, պետք է նշել, որ հայերենում դարձվածքների մի մասը հանդես է գալիս իր մշտական, բառա-քերականական մեկ ձևով, ինչպես, օր. բախտի քմահաճույք, սպիտակ ջարդ, գուլիս տալ, գլուխ դնել և այլն: Դարձվածքների մյուս մասը հանդես է գալիս մեկից ավելի (երկու և ավելի) բառա-քերականական տարատեսակներով: Հիմնականում դարձվածքների տարբերակ պետք է համարել միայն բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմի առկայությամբ այս կամ այն բառի (բաղադրիչի) քերականական վարիացիաները, ինչպես նաև դարձվածի բաղադրիչը հանդիսացող բարբառային և փոխառյալ բառերն ու բառաձևերը դրականով փոխարինելու դեպքերը: Մինչդեռ դարձվածի կազմի մեջ մտնող բառերի հնչյունական փոփոխակները դարձվածաբանական տարբերակների համար ոչ մի արժեք չեն ներկայացնում: Դարձվածաբանական տարբերակները փաստորեն դարձվածը կազմող բաղադրիչների բառա-քերականական տարբերակներն են, որոնք նույնն են իրենց իմաստներով և իմաստային ձուլվածության աստիճանով¹⁰: Դարձվածաբանական տարբերակները դարձվածաբանական հոմանիշներից տարբերակելու համար անհրաժեշտ է որոշել առաջինների սահմանները:

Նախ՝ դարձվածաբանական տարբերակ չպետք է համարել միևնույն դարձվածի կազմի մեջ մտնող բաղադրիչների ուղղադրական կամ բառային շնչին տարբերակները, ինչպես՝ աչքում (աչքերում) յեղ (յուղ) լինել կամ ունենալ. արյունը գլուխը զարկել (կամ զարնել), աստված (աստոծ) հեռու տանի, աստված շանի կամ ոչ անի և այլն:

Մեր կարծիքով, հայերենում դարձվածային տարբերակներ պետք է համարվեն միևնույն դարձվածի հետևյալ տարատեսակները.

Ա. Դարձվածը կազմող բաղադրիչի կամ բաղադրիչների քերականական տարբերակները. օր. աստամների արանքից կամ արանքով, Բաբելոնի կամ բաբելոնյան աշտարակաշինություն, արյունը գլխին կամ գլուխը զարկել, գլուխը յուղել կամ յուղ քսել, գլուխը քարը՝ քարին՝ քարով տալ. երես տվինք աստառ էլ է ուղում (կամ կուղե) և այլն: Այս կարգի մեջ պետք է դասել նաև դարձվածը կազմող բաղադրիչների եղակի և հոգնակի զործածության դեպքերը, երբ դարձ-

¹⁰ Տե՛ս Н. Шанский, նշվ. աշխ., էջ 43:

վածի իմաստը չի փոխվում. օր. արյունը աչքը կամ աչքերին առնել, բերանի ջուրը կամ ջրերը գնալ, աչքին կամ աչքերին չհավատալ, աչքիս կամ աչքերիս վրա, աչքում կամ աչքերում յուզ լինել և այլն:

Բ. Երբ դարձվածը կազմող բաղադրիչներից մեկը (իսկ երբեմն նաև մեկից ավելին) արևմտահայերեն է՝ իր քերականական ձևերով, բայց կան դրան համարժեքները արևելահայ գրական լեզվում, օր. բերանը հովին բռնել (արևմտահայերենում քամուն բռնել (արևելահայերենում), համապատասխանաբար՝ գլխի ձգել— գլխի գցել, մատով կհամրվին— մատով են հաշվվում, խելքը գլխեն առնել— խելքը գլխից առնել, ակռաները բթանալ— ատամները բթանալ. քիթ-փինջ ընել— քիթ ու մուռնի անել և այլն:

Գ. Գրաբարյան քարացած ձևերով կազմված դարձվածը և դրան համարժեք ժամանակակից հայերենի նույն դարձվածը. օր. աստված ընդ քեզ (գրբ.) և աստված քեզ հետ:

Դ. Երբ միևնույն դարձվածի համապատասխան բաղադրիչներից մեկը կամ մեկից ավելի բաղադրիչներ պատկանում են գրական լեզվի և բարբառային բառապաշարներին, այսինքն՝ գրական և բարբառային բառեր են, ըստ որում, համապատասխան այդ բաղադրիչները միևնույն իմաստն են արտահայտում, նույնանիշներ են և կարող են տարբերվել միայն ոճական-կիրառական նշանակություններով և, որպես օրենք, վերոհիշյալ բաղադրիչները միմյանցով փոխարինելիս անփոփոխ է մնում դարձվածի ընդհանուր բառային իմաստը. օր. ավելի պատառ կամ կտոր կամ թիֆեն փորը չի ծակի, արևը վատ կամ փիս տեղը մայր մտնել կամ մեր մտնել, աչքի սուրմա կամ ծարիր թոցնել, աչքին (կամ աչքերին) փոշի կամ թոզ փչել, բզի գլխին դրմբուզով կամ բռնցքով տալ կամ գարկել, գլխին ընկույզ, կակալ, պոպոֆ կոտրել և այլն: Ըստ երևույթին, վերոհիշյալ կարգի դարձվածային տարբերակները նույնպես կարելի է իրարից զանազանել նաև ըստ բաղադրիչների ծագումնաբանական հատկանիշների, այսինքն՝ բուն գավառական և փոխառյալ:

Ե. Երբ դարձվածի բաղադրիչներից մեկը (կամ մեկից ավելին) կարելի է փոխարինել գրական լեզվի նույն նշանակությունն ունեցող բառով, իսկ երբ բաղադրիչը բայ է՝ համապատասխան հարադրավոր բայով, նույն բաղադրիչ բայի հարադրավոր ձևով. օր. ծակը կոխել կամ մտցնել, առած կամ առակ դառնալ, աքիլեսյան գարշապար կամ կրունկ, ավգյան ախոռ կամ գոմ, աստված կյանքդ երկարի կամ երկար անի, մեկի ծափով (ծափի տակ) պարել կամ պար գալ, արյունը եռալ կամ եռ գալ՝ եփվել կամ եփ գալ և այլն:

Զ. Դարձվածային տարբերակ պետք է համարել նաև նույն դարձվածի ամբողջական և կրճատ ձևերը, որոնք ոմանց կողմից դիտվում են որպես դարձվածքային հոմանիշներ. օր. ամուսնական առագաստը պղծել և առագաստը պղծել, բախտի քմահաճույքին թողնել և բախտին թողնել, մեկի գլխին սև ձյուն գալ և մեկի գլխին սև գալ և այլն: